

ԳԵՐ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ

Ավազանի անունով՝ Արշավիր: Ծնվել է 1932 թվականին Դամասկոսում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Սահակյան վարժարանում: 1946 թվականին ընտանիքով ներգաղթել է մայր հայրենիք և հաստատվել Լենինականում: 1956—1957 ուսումնական տարում ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1958 թվականին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1960 թվականին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի:

1961 թվականին ավարտել է հոգևոր ճեմարանը՝ որպես ավարտական ներկայացնելով «Գևորգ Զ կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը» ուսումնասիրությունը:

1961—1962 ուսումնական տարում աստվածաբանական և եկեղեցական պատմության վերաբերյալ դասախոսություններ է լսել և վկայագիր ստացել Զագորսկի ռուսական մայրավանքում:

1962 թվականի օգոստոսի 25-ին, ձեռամբ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա և վերանվանվել Նարեկ աբեղա: Տ. Նարեկ սրբազանը Մայր Աթոռում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ:

1963 թվականին, պաշտպանելով «Հայ եկեղեցական իրավունքը մինչև Ը դարը» ուսումնասիրությունը, ստացել է վարդապետական մասնավոր աստիճան և լանջախաչ:

1968 թվականին ազգային-եկեղեցական ժողովում ընտրվել է Մայր Աթոռի վերատուգիչ հանձնաժողովի անդամ:

1967—1972 թվականներին եղել է ս. Գեղարդ վանքի վանահայր:

1970 թվականին, որպես Վեհափառ Հայրապետի գավազանակիր, ընկերակցել է Նորին Ս. Օծությանը Իտալիա, Ֆրանսիա և Պորտուգալիա կատարած պաշտոնական այցելությունների ժամանակ:



1971 թվականի դեկտեմբերի 1-ից, Վեհափառ Հայրապետի հմր. 717 սրբատառ կոնդակով, նշանակվում է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 1973 թվականի հոկտեմբերին՝ առաջնորդ Շիրակի թեմի:

1973 թվականի սեպտեմբերի 30-ին ձեռնադրվել է եպիսկոպոս՝ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից: